ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024Թ. ՄԱՐՏԻ 13-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Խաչիկ Սողոմոնյան

2. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Վրաստանի Հանրապետություն, ք. Թբիլիսի, 2024թ. մարտի 13

3. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ)

4. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   «Կենտրոնական Ասիայում, Հարավային Կովկասում և Արևմտյան Բալկաններում կայուն տեղաշարժ և խելացի կապակցվածություն» ծրագրի շրջանակներում «Կայուն տեղաշարժը և խելացի կապակցվածությունը Կովկասում» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցություն:

5. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Կայուն տեղաշարժ և խելացի կապակցվածություն, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի էլեկտրոնային ուսուցման հարթակին վերաբերող հարցեր, բեռնափոխադրումների ոլորտի թվայնացում, ճանապարհային անվտանգություն, ցարծր արտանետումներ, էկոլոգիապես մաքուր տրանսպորտ, թվային տախոգրաֆների համակարգ, ճանապարհներին տեխնիկական զննության գործընթաց:

6. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**
   Հանդիպումներ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ներկայացուցիչների, Վրաստանի և Սերբիայի պատվիրակների հետ, քննարկվել են կայուն տրանսպորտին, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի էլեկտրոնային ուսուցման հարթակին, ճանապարհային անվտանգությանը, ճանապարհներին տեխնիկական զննության գործընթացի կազմակերպմանը, բեռնափոխադրումների ոլորտի թվայնացմանը, էկոլոգիապես մաքուր տրանսպորտին և թվային տախոգրաֆներին վերաբերող հարցեր, ներկայացվել են ՀՀ-ում կայուն տրանսպորտի ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ ՀՀ-ում էլեկտրամոբիլների կիրառությանը և տարածվածությանը, դրանց զարգացման համար առկա իրավական կարգավորումները:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Պայմանավորվածություն է ձեռքբերվել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի բաժնի հետ հետագա համագործակցության, ինչպես նաև ՀՀ-ի համար վերոնշյալ ծրագրի շրջանակներում գործողությունների ծրագրի մշակման և Երևանում աշխատաժողով կազմակերպելու համար:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ակնկալվում է շարունակել համագործակցությունը, ՀՀ-ում վերոնշյալ գործընթացների ներդրումը, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից աջակցությունը, ՀՀ-ի համար կայուն տրանսպորտի բնագավառում գործողությունների ծրագրի մշակում:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ**

19.03.2024թ.